Մ. ՄԿՐՅԱՆԸ ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

Հայ հին և միջնադարյան մշակույթի նշանավոր ներկայացուցիչներին նվիրված ծանրակշիռ մենագրությունների, ուսումնասիրությունների կողքին նկատելի է նաև գրականության կամ մատենագրության, դպրության պատմությունների զգալի քանակ [Գ. Զարբհանալյան, Հ. Գաթրճյան, Ա. Զամինյան, Ղ. Ալիշան («Հայապատում»-ը), Վրթ. Փափազյան և ուրիշներ]: Բայց նրանք բոլորը հակված էին միջնադարի գրականությունը դիտել հաջորդական դարերի և նշանավոր (նաև կրոնաեկեղեցական երբեմն ոչ միշտ հանրահայտ) անունների հերթականությամբ, խորը բանասիրական դիտարկումների, պատմաաղբյուրագիտական ընդհանրացումների կողքին սահմանափակվել «վառվռուն ոճ», «գեղեցիկ գրելաձև» և նման մի քանի արտահայտություններով: Չկար պարբերաբաժանում, չէր ստվերագծվում գրականության ու մշակույթի գեղարվեստական զարգացման օրինաչափությունը՝ կապված ազգի պատմական ճակատագրի հետ: Ճիշտ է՝ ուսումնասիրությունները ներառում էին համարյա բոլոր հայտնի գործիչներին, բայց երբեմն օտարազգի հայագետների կողմից առաջարկված ժխտման ու տեղաշարժման գայթակղությունը թափանցում էր նաև մեր հայագետների մենագրությունները: Հին և միջնադարյան գրականության ամբողջական և վերլուծական մեթոդների ու սկզբունքների հետևողականությամբ հատկանշվող պատմության առաջին հեղինակը Մանուկ Աբեղյանն էր՝ XX դ. 40-ական թվականներին: Այդ պատմության եռամաս պարբերացման մեջ՝ «Նախնական առասպելապատմական բանահյուսություն», «Եկեղեցաքաղաքական մաքառման գրականություն», «Վերածնության գրականություն», ընդգրկելով հին գրականության վիթխարի և բազմաբովանդակ նյութը՝ նշանավոր հայագետը չէր կարող չանել նաև վիճելի եզրահանգումներ, որոնք շատ առումներով առաջինը և ուսանելի լինելով հանդերձ, առաջադրում էին նաև հեղինակի ասածի նկատմամբ քննական անխուսափելի վերաբերմունք: Եվ ահա, դեռևս 40-ական ու 50-ական թվականներին երիտասարդ Մ. Մկրյանը զգուշավոր մտավ միջնադարագիտություն՝

«13–18-րդ դարերի աշխարհիկ քնարերգություն» փոքրածավալ քրեստոմատիկ ուսումնասիրությամբ, այնուհետև իսկապես համարձակ ու ինքնատիպ գիտականությամբ հատկանշվող «Գրիգոր Նարեկացի» և 70-ական թվականներին գրած «Մովսես Խորենացի» մենագրություններով ու այդ ամենի ամփոփագիրը դառնալու հակված «Հայ հին գրականության պատմություն» գործով, որի առաջին և միակ հատորը լույս ընծայվեց 1976-ին Երևանի համալսարանի հրատարակությամբ: Անմիջապես որոշակի դարձավ Մ. Մկրյանի գիտամեթոդական դիրքորոշումը. նորովի ընթերցմամբ ցուցադրել անցյալի գրականության հայտնի դեմքերի, մանավանդ պատմիչների երկերի գիտագեղարվեստական հնչողությունը՝ նրանց խոսքի նկատմամբ քննական հավատով, թեկուզ երբեմն դա չհիմնավորված թվա, և Մ. Աբեղյանի դիպուկ ու շատ ընդհանրական պարբերացման դիմաց հին և միջնադարյան գրականության զարգացման օրինաչափությունները դիտարկել ավելի որոշակի, թեպետ ոչ մինչև վերջ իմաստավորված բաժանումներով. 1) հնագույն ժողովրդական բանահյուսություն, 2) հայ գրականությունը 5-րդ դարում, 3) այնուհետև՝ 6–9-րդ դարերում, 4) 10-րդ դարում, 5) 11–12-րդ դարերում, 6) 13–16-րդ դարերում և 7) 17–18-րդ դարերում: Դարերի սոսկական հաջորդականությամբ կատարված այս խիստ ձևական շրջանաբաժանումն, իհարկե, նահանջ էր Մ. Աբեղյանի գիտական խորությամբ կատարված պարբերացման սկզբունքներից: Շրջաբաժանման բովանդակային իմաստն այն է, որ V դարը դիտվում է դասական շրջան, VI–IX դարերին բնորոշ է համարվում դավանաբանական պայքարի և 5-րդ դարի նմանողության միտումը, որ նկատել էր նաև Մ. Աբեղյանը, X դարը Վերածննդի շրջանն է: Հետագա ընդգրկումների իմաստը գիտնականը չի հստակեցնում. պարզ է, որ XIII դարից սկսվում է աշխարհիկ քնարերգության շրջանը: Ակնհայտ է, որ կարելի է անհետևողականություն տեսնել նաև այս պարբերացման մեջ: Վերածնունդը չէր կարող սահմանափակվել միայն X դարով, Մ. Աբեղյանը որոշակի սկզբունքների հետևողականությամբ այն տեղավորում է XI–XVII դարերում, իսկ երևույթի գեղագիտական-իմաստասիրական հատկանիշները հիմք են տալիս (միշտ վեճի հավանականությամբ հանդերձ) այն տեսնել X–XII դարերում: Միաժամանակ XIII դարից սկսվող քնարերգության աշխարհականացումը տևում է մինչև XVIII դար, և նույնիսկ այն, որ XVII–XVIII դարերում նրանում որոշողն աշուղական երգն էր, առանձնապես հիմք չի տալիս տարաբաժանել նույն հատկանիշներով բնութագրվող այդ մեծ պարբերաշրջանը: Խնդրի ընդգրկունությունն ու բազմաշերտ հարստությունը միշտ անխուսափելի է դարձնում բանավեճի հնարավորությունը, բայց տվյալ դեպքում կարևորը քայլի առաջընթաց իմաստն է և վաստակի գնահատականը: Իսկ այդ գնահատականը Մ. Մկրյանի կերպարում նախ շեշտադրում է մանկավարժ-գիտնականին, որը ակադեմիզմի որևէ ճիգ չի արել երբեք: Այդպիսին է նա իր ընդգրկուն ու բարդ նյութի սկզբից մինչև վերջ. խոսում է հայ ժողովրդի ծագման դժվարին, թվում է՝ փաստառատ, բայց միշտ հակասական, տրամաբանական ու ներհակ եզրահանգումներով բնորոշվող երևույթի մասին, թե գեղեցիկը տեսնելու իր նուրբ կարողությամբ կարծես դա պեղում է անցյալի պատմիչների ու քնարերգուների երկերում կամ հետազոտական խոր-

քերը մտնում երկու դարակազմիկ մեծությունների՝ Խորենացու և Նարեկացու ժառանգության վերլուծություններում. նա իսկապես միշտ երկխոսում է լսարանի հետ: Գեղագիտական վերլուծության, գեղարվեստի խորը դիտողականության ակնհայտ հակումներով գիտնականը, որին հենց դրանք տասնյակ տարիներ դարձրեցին նոր գրականության լավագույն դասախոսը համալսարանում (նաև դպրոցական կենսունակ դասագրքերից մեկի հեղինակը), հին և միջնադարի գրականություն մտավ բանավեճի պահանջով ու դրանով բացատրելի լավ ու վատ դրսևորումներով: Քննական և արևմտյան հայագիտության ու բանասիրության մեջ հայոց միջնադարի նկատմամբ եղած որոշ վերապահումային դիրքորոշումը, այն, որ պատմասկզբնաղբյուրային վստահություն չեն ներշնչում Ագաթանգեղոսի վկայաբանական-հրաշապատումային շարադրանքը, «վիպասան» Բուզանդն ու «բանաստեղծ» Եղիշեն, ամենից շատ՝ ամենամեծը՝ քերթողահայր Խորենացին և էլի ուրիշներ, յուրովի իր մասնակի արտահայտությունը գտավ նաև Մ. Աբեղյանի գիտական համակողմանի քննությունների մեջ: Բանահյուսական տարրի անխուսափելի առկայությունը որոշակիորեն բացարձակացնելով՝ նշանավոր հայագետը «Պարսից պատերազմ»-ի մեջ է ներառում V դարի պատմիչներից ոմանց, մանավանդ Փավստոսի գրքի զգալի մասը՝ փաստորեն այն վերածելով բանահյուսական նյութերի ժողովածուի: Մ. Մկրյանի կարևոր ու բանավիճային նպատակադրումներից մեկը, ահա, անցյալի պատմագրական հուշարձանների պատմագիտական արժեքների ցուցադրումն է՝ դրան զուգահեռված գեղարվեստական տարրերի պատճառաբանումներով: Եվ այս դիրքորոշման մեջ ևս առկա է բանավիճային մի սկզբունք՝ մեծ մասամբ աներկբա հավատը պատմիչների նկատմամբ, որը, սակայն, ընդհանուր առմամբ դրսևորվում է գիտավերլուծական հիմնավորումներով: Գիտնականի կայուն համոզմամբ՝ յուրաքանչյուր երկ իր մեջ խտացնում է պատմիչի (Մկրյանը լայնորեն շրջանառեց «պատմիչ-գրող» ձևակերպումը) ապրած ժամանակաշրջանի ներքին ու արտաքին քաղաքական հարաբերությունների, կենցաղի առանձնահատկությունները, ժամանակի ընդհանուր աշխարհայեցողության և տվյալ հեղինակի աշխարհընկալման ու ինքնատիպ խառնվածքի, դրանից բխող ոճական յուրահատկության կնիքը: Սրանք վերլուծական սկզբունքային դիտանկյուններ են Մ. Մկրյանի համար, և նա վստահ էր, որ պետք է ոչ կուրորեն բացարձակ ճշմարտություն համարել պատմիչի հաղորդած ամեն մի փաստ ու տեղեկություն (իհարկե, ընդհանրության մեջ հավատալով նրան), ոչ էլ պատմիչի կողմից որոշ երևույթների սուբյեկտիվ մեկնաբանությունը շատ ավելի սուբյեկտիվորեն հասցնել ժխտողական վերաբերմունքի ու գնահատականի: Այս սկզբունքով ու Խորենացու վկայակոչումներով Մ. Մկրյանը ապացուցում է նորովի, որ «հայ ժողովրդի կազմավորման պրոցեսը սկսվել է Բիայնայի հզոր թագավորության ընթացքում» (էջ 18), այդ շրջանում էլ ծագել են առասպելները, որոնց սյուժետային զարգացումը հասնում է վիպական զրույցների, վիպերգերի ծնունդին, որոնց մեջ պետք է ընդգծելի դիտել ոչ թե փոխառությունները, այլ ազգային-պատմական հատկանիշները: Դրանց ներառումներով հանդերձ ուղղակի պատմական հավաստիություն ու արժեք ունեն V դարի և հետագայի պատմիչների երկերը, ո-

րոնք «վաղ միջնադարում հանդիսացան մարդկության պատմագիտական մտքի մի նոր փուլը» (էջ 119): Բանավիճելով այդ հուշարձանները «եկեղեցաքաղաքական մաքառման գրականություն» որակելու Մ. Աբեղյանի սկզբունքի դեմ՝ Մ. Մկրյանը բնութագրական է համարում «աշխարհիկ-քաղաքական մաքառման գրականություն ձևակերպումը»՝ հենվելով այն բանի վրա, որ կրոնի և եկեղեցու խնդիրը միշտ քաղաքական հնչեղություն է ունեցել: Դա հաստատում է ոչ միայն պատմագրության կոնկրետ բովանդակային քննություններով, այլև պատմիչների աշխարհայացքի բացահայտումներով: Բուզանդին և շատերին բնորոշ է համարում գաղափարային կապվածությունը երկրի անկախության կողմնակից կենտրոնաձիգ ազնվական դասի հետ կամ Խորենացու երկի մեծությունը պատմական կարևոր աղբյուր լինելուց բացի «ավելի քան պայմանավորվում է նրա հեղինակի՝ իբրև գիտնականի և մտածողի, իբրև ժամանակի հասարակական մտքի ու գիտակցության և էսթետիկական ճաշակի ամենախորը կրողի մեծ արժանիքներով» (էջ 179): Խորենացու աշխարհայացքի բնորոշ կողմերն են համարվում հայրենասիրությունը և հումանիզմը՝ այս դեպքում ևս ոչ թե հանդիսավոր - ճառային, այլ գիտական կոնկրետ բովանդակավորմամբ: Առաջինը դրսևորվում է որպես ուժեղ, եռանդուն պետական գործիչների փառաբանում և թույլերի դատափետում (կարելի էր բացել «իմաստասեր բարքի» շերտերը), օտար լծի դեմ պայքարի մեջ ներքին ուժերի համախմբվածության անհրաժեշտություն, ֆեոդալական մասնատվածության քննադատություն: Իսկ մարդասիրության կարևոր կողմերն են մարդու գնահատումը «խոհականության» չափանիշներով, ազգի՝ իբրև մի ամբողջի ընկալումը, շատ տիրակալների համարձակ քննադատությունը: Այս ամենով հանդերձ, անշուշտ, ժամանակի գաղափարական պարտադրանքների ուժին ենթարկվելով և դրանցով բնականորեն իմաստավորելով իր գիտական դիրքորոշումը՝ ոչ այնքան բանասեր- հետազոտողի, որքան գեղագետ-վերլուծողի իր կարողությունների մեջ Մ. Մկրյանը անխուսափելիորեն թողնում է նաև սողանցքներ, հասնում երբեմն վիճելի որոշ ծայրահեղացումների: Դա բխում է միջնադարի նշանավոր երևույթների մեջ կրոնականությունը համարյա բացառելու, նրանց երբեմն եկեղեցական աշխարհայեցողության հակադրելու պահվածքից: Դրա տարրերը կային դեռևս պատմագրության քննության մեջ, որոնք ավելի զգալի են դառնում Վերածննդի գրականության և աշխարհիկ քնարերգության գնահատումներում: Ակնհայտ է, որ հայկական Վերածննդի և Գրիգոր Նարեկացու ժառանգության արժևորումների մեջ նշանակալից է Մ. Մկրյանի վաստակը: Անցած դարի 50-ական թվականներին ոչ միայն վանական Նարեկացու հանճարի հետևողական, թեկուզ ժամանակի նահանջների շունչը ներառած գնահատականը, այլև «հայկական Վերածնունդ» մշակութային դարաշրջանի հասարակական-գեղագիտական, եվրոպականի հետ տիպաբանական առանձնահատկությունների բացահայտումները յուրօրինակ սխրանք էին՝ ամբողջ զգուշավորությամբ հանդերձ: Հասարակական-մշակութային ելևէջումները ազգի պատմությունից բխեցնելու մեթոդաբանական նույն հիմունքներն ակնառու են նաև այստեղ. պայքարը արաբների դեմ և Բագրատունյաց թագավորության հաստատումը, քաղաքների զարգացումը և աշխարհիկ մտայնութ-

յունների թափանցումներն ու տիրակալումը, գյուղացիական ազատագրական շարժումները, գիտության և ճարտարապետության աշխարհականացման և մարդակենտրոն միտումները,– ահա այս որակների փոխկապակցված զարգացման արդյունք է համարում Մ. Մկրյանը մշակութային նոր դարաշրջանի ձևավորումը: Վերածնունդը դիտարկվում է ոչ միայն Գ. Նարեկացու քնարերգության ոճամտածողական առաջընթացի մեջ, այլև ժամանակի պատմագիրների՝ Հովհաննես Դրասխանակերտցու և Թովմա ու Անանուն Արծրունիների երկերում: Ետհինգերորդդարյա պատմագրության (Մեբեռոս, Հովհան Մամիկոնյան, Մովսես Կաղանկատվացի, Ղևոնդ) զարգացման օրինաչափությունները շարունակելով՝ Դրասխանակերտցին «Հայոց պատմության» մեջ ազատորեն կերպավորում է իր անձը, խոսում իր գործի, ապրումների մասին: Թովմայի «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ը չի ներփակվում միայն մեկ տոհմի տարերգության շրջանակներում: Պատմիչը ազատագրական պայքարի մեջ շեշտում է ժողովրդի դերը, խոսում նրանց (խութեցիների) ապրելակերպի ու կենցաղի մասին՝ այս առումով լինելով առաջինը, գեղարվեստական մանրամասներով է ներկայացնում ճարտարապետական կառուցումները, շինարարությունը, Աղթամարի վերածննդյան բովանդակությունը, ինչի աշխարհայացքային առկայությունը Անանունի մեջ շեշտվում է Գագիկ Արծրունու կերպարի բացարձակացմամբ: Երևույթի վերլուծական ընդգրկունությունը, իհարկե, Նարեկացու ժառանգության քննությունն է: Գիտական բարձր կատարումներով, յուրովի սկզբունքայնությամբ հանդերձ, ժամանակի գաղափարական ճնշումները թույլ չեն տվել խորատես գիտնականին և՛ Վերածննդի, և՛ Նարեկացու ստեղծագործությունների մեջ հստակեցնել կրոնամիջնադարյան որակների առկայությունն ու անհրաժեշտությունը, ինչը Վերածննդի առանձնահատկություններից է ընդհանրապես (այն հավասարապես բխում է անտիկ և միջնադարյան մշակույթներից, ներառում երկուսի հատկանիշներն էլ), ինչպես նաև նոր մշակութային դարաշրջանի մարդակենտրոնության փիլիսոփայական, գեղագիտական շառավիղները: Եվ դա տվյալ ժամանակի մեջ ինքնին հասկանալի է: Միաժամանակ անհրաժեշտ խորքով բացահայտվում են բնության և մարդկայնորեն գեղեցիկի, մարդու ներքին դրամատիզմի, հոգեկան տվայտանքների և ինքնակատարելագործման հավերժական ձգտումի բանաստեղծական հզոր արտահայտությունները՝ Նարեկացու տաղերգության մեջ երբեմն հոգևոր տարրի ստվերումներով: Ընդհանրացնելով այն, որ «նկարչական տեսողությունը և խոսքի երաժշտականությունը Նարեկացու բնական տարերքն են» (էջ 469), և վերոհիշյալ բովանդակային ընդգրկումների մեջ հաստատելով դա գեղարվեստական նյութի նրբին ընկալումների մեջ, նաև Նարեկա հանճարի բառաստեղծական հզոր կարողությամբ՝ գիտնականը վերլուծական սկզբունք է դարձնում նաև այսպիսի դիտարկումներ. «Նարեկացին ստեղծագործում է զարմանալիորեն ազատ՝ անտեսելով եկեղեցական դոգմաների կաշկանդիչ շղթաները» (էջ 475), և ընդհանրապես «նրա համար գոյություն չունեն երևակայության թռիչքի դավանաբանական կաշկանդումներ»

(էջ 471): Գաղափարական պարտադրանքի շորշոփներն ու գեղագիտական խորը ընկալումը գիտնականի մեջ վերածվում են բարդ ներհակության, որը, ի վերջո, հասնում է զգուշավոր, բայց ճշմարիտ եզրահանգումների. «Ֆիզիկական գեղեցկության հետ միասին, ճիշտ է, հոգևոր գեղեցկությունն է Նարեկացին առավելապես պատկերում, բայց այդ հոգևորը նրա մոտ իր վերացական, անորոշ աստվածայինի կերպարը մասամբ կորցնում է՝ փոխարինվելով կոնկրետ մարդկայինով» (էջ 472): Միշտ և անընդհատ շեշտվում է Նարեկացու հումանիստական աշխարհայացքը և դրա վերածննդյան իմաստավորումը, որը տվյալ դեպքում ճշմարիտ սկզբունք է՝ գուցե գեղագիտորեն միշտ բացելու կարիք ունեցող շերտերով, ինչը ապագայի մասնագետի խնդիրն է: Մ. Մկրյանի՝ որպես հայ միջնադարյան գրականության պատմաբանի հիմնական դերը մնում է այդ գրականության գեղարվեստական արժանիքների վերհանումը, ուր ակնհայտ է դառնում գեղագետի նուրբ դիտողականությունը, անգամ պատմագրական երկը այդ սկզբունքով վերընթերցելու և այուժետային վերապատմումներով (այդպես թվում է) աննշան թվացող դրվագի մեջ գեղեցիկի, պատկերավորի ու հոգեբանականի կարևոր ընդհանրացումներ տեսնելու կարողությունը: Մինչև անգամ սեպագիր արձանագրությունների կանոնիկ ու սխեմատիկ ոճի մեջ հայտնաբերվում են աշխարհընկալումների ու բնավորությունների ինքնատիպ դրսևորումներ. Բիայնայի թագավորների արձանագրությունները, օրինակ, չունեն դրանց հատուկ՝ դաժանությունների պարծենկոտ նկարագրություններ, իսկ Ռուսա Առաջինը վերածվում է գեղարվեստական կերպարի և բնութագրվում դրամատիկ էությամբ: Պատմիչների գործերի գեղարվեստական արժանիքները բացահայտվում են վերլուծական կայուն սկզբունքներով՝ ժողովրդական ստեղծագործության ոգու ազդեցությունը, անցյալի հերոսների կերպավորում, պատկերավոր նկարագրություններ և ոճական այլ ինքնատիպություններ: Այսպես, Փավստոս Բուզանդին հատուկ է դեպքերը վիպական-դրամատիկ, անգամ կենցաղային ընթացքի մեջ ներկայացնելու հակումը, Մովսես Խորենացու ոճի մեջ ներդաշնակվում են գիտական սեղմությունը և պատկերավոր ճոխությունը, Եղիշեի գրելաձևին բնորոշ է ականատեսի զգացմունքային հագեցվածությունը և քնարական զեղումների բանաստեղծականացումը, և այսպես շարունակ:

Մնում է նորից վերարժեքավորել կատարածը, հիշել ու շեշտել միշտ, որ Մ. Մկրյանը ականավոր մանկավարժ էր, և նրա գիտությունն էլ կոչված էր այդ առաքելության բաղադրամասը լինելու: Հիշել և անկեղծ խոստովանել, որ նրա հմայքը շատ ավելի լսարանում էր, քան թղթի վրա, և երկուստեք տվածով իմաստավորել ուսուցչի 100-ամյա հոբելյանը:

ՎԱԶԳԵՆ ՍԱՖԱՐՅԱՆ